## Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարեր (2024-2025 ուստարի)

## (Տևողությունը 3 ժամ)

## 10-րդ դասարան

1. Ի՞նչ գիտես Քերթողահոր ժառանգության մասին: Ինչպե՞ս է ավարտում նա իր հռչակավոր «Պատմությունը»: Ներկայացրո՛ւ հայոց թագավորության անկումը՝ ըստ այդ հատվածի: Ի՞նչ ստեղծվեց ի հակակշիռ պետականության անկման:

**10 միավոր**

2. Ո՞ւմ մասին է հետնյալ տեղեկությունը. «Մեծիմաստ մարզպան, Հայոց զորավար Մամիկոնեից տեր Վահանը, կամենալով դարձնել իրեն առավել մերձավոր ու սիրելի՝ նրան հանձնեց Նոր քաղաքի հոյակապ ու ականավոր այն տեղը, որ Սուրբ Կաթողիկե եկեղեցին է իր վանքով: Եվ նա, մարզպանի խոսքն ընդունելով, խնամք էր տանում այդ տեղի վրա»: Պատմի՛ր այդ պատմիչի և տեղի մասին:

**10 միավոր**

3. Վերլուծի՛ր «Արտաշես և Սաթենիկ» վիպերգը. ներկայացրո՛ւ Սաթենիկի գեղեցկությունը՝ ըստ վիպերգի: Ի՞նչ ես կարծում՝ միայն գեղեցկությա՞մբ հիացավ Արտաշեսը, եթե ոչ՝ հիմնավորի՛ր՝ վիպերգի համապատասխան տողերով:

**10 միավոր**

4. Ներկայացրո՛ւ Փոքր Մհերին: Ինչո՞վ ես արդարացնում նրա՝ Ագռավաքարում փակվելը: Հավատո՞ւմ ես նրա դուրս ելնելու նախապայմանին:

**10 միավոր**

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան**